



ԳՆԱՆՇՄԱՆ ՀՐԱՎԵՐ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթ՝

- 2022թ. ISO/IEC 27001:2013 Տեղեկատվական Անվտանգության Կառավարման Համակարգի վերահավաստագրման
- 2023-2024 թվականներին համապատասխանության աուդիտների անցկացման նպատակով:

Հայտ ներկայացնող ընկերությունը պետք է՝

- հավատարմագրված լինի Եվրոպական հավատարմագրման համագործակցության միության լիիրավ անդամներից որևէ մեկի կողմից,
- համապատասխանի ISO/IEC 17021-1 ստանդարտի պահանջներին (Կառավարման համակարգերի աուդիտի և հավաստագրման ծառայություններ մատուցող մարմինների համար սահմանված համապատասխանության գնահատման պահանջներ),
- ունենա ISO/IEC 27001 ստանդարտով (Տեղեկատվական տեխնոլոգիաների, անվտանգության տեխնիկայի, տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի պահանջներ) աուդիտ անցկացնելու մասնագիտացում և ֆինանսական ոլորտում ունենա նշված տեսակի աուդիտի իրականացման փորձ:

Աուդիտը պետք է անցկացվի մինչև 2022 թվականի մարտի 10-ը:

Վկայականը պետք է տրամադրվի աուդիտն ավարտելուց և Կատարողի հետ համաձայնեցված էական անհամապատասխանությունները (առկայության դեպքում) վերացնելուց և/կամ ոչ էական թերությունները վերացնելու ծրագիրը ներկայացնելուց հետո առավելագույնը 14 օրացուցային օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան 2022թ-ի մարտի 25-ը:

Հավելյալ տեղեկատվություն գնառաջարկի ներկայացման համար

1. Կազմակերպության անվանումը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
2. Կազմակերպության վեբ-կայք՝ www.ameribank.am
3. Կազմակերպության աշխատակցիների ընդհանուր թիվը (մոտավոր)՝ 1153
4. Աշխատակազմի բաշխվածությունն ըստ տարածքների (մոտավոր) (<https://ameribank.am/service-network>)

Գլխամասային գրասենյակ՝ 687
Մասնաճյուղեր (14 մ/ճ ք. Երևան)՝ 353

Մասնաճյուղեր (9 մ/ճ մարզերում)՝ 112

5. Գործող վկայականներ՝

- ISO 9001:2015 (Valid until April 15th, 2024)
- ISO/IEC 27001:2013 (Valid until March 25th, 2022)

Գնառաջարկներն (հայտերը) անհրաժեշտ է ներկայացնել tenders@ameribank.am էլ փոստով, Acrobat PDF և MS WORD տարբերակներով: Գնառաջարկները պետք է ներառեն բոլոր պահանջվող կորպորատիվ փաստաթղթերը, ինչպես նաև մրցույթին մասնակցող յուրաքանչյուր աուդիտորի մասնագիտական փորձի նկարագրությունը:

Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2021թ. օգոստոսի 10-ը, ժամը 18-00 (GMT +4):

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

ք. Երևան, 0015, Վ Սարգսյան 2

Հեռ.՝ (374-10) 56-11-11

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Տաթևիկ Ավանեսյան (գնումների ավագ մասնագետ)

Էլ. հասցե՝ Tatevik.Avanesyan@ameriabank.am